Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 487 - Ա որոշման

«Գույքի պատրաստում և ձեռք բերում»
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից «Արցախի Հանրապետության մարդասիրական օգնություն» բարեգործական ծրագրի շրջանակներում 2020 թ. սեպտեմբերի 27-ին ադրբեջանի կողմից ռազմական գործողությունների սանձազերծման արդյունքում պարտադրված պատերազմի հետևանքով Արցախի Հանրապետության հինգ հոգանոց անօթևան մնացած ընտանիքների համար գույքի պատրաստում և ձեռք բերում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Բարեգործը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ, ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից հանգանակված միջոցներ
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղաք Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Արցախի Հանրապետություն, սոցիալական բնագավառ
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի բյուջեն կազմում է 199. 001. 000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Արցախի Հանրապետության հինգ հոգանոց անօթևան մնացած ընտանիքներ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2021 թ. հունիսի 28-ից, մինչեւ 30 օգոստոսի 2021 թ.
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ժամկետում նախատեսվում է Արցախի Հանրապետության մարդասիրական օգնություն» բարեգործական ծրագրի շրջանակներում Արցախի Հանրապետության հինգ հոգանոց անօթևան մնացած ընտանիքների համար գույքի պատրաստում և ձեռք բերում: Ծրագիրը նախատեսվում է 2021 թ. հունիսի 28-ից, մինչեւ 30 օգոստոսի 2021 թ. Արժեքը՝ 199. 001. 000 ՀՀ դրամ

10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Նախատեսվում է գույքի պատրաստում և ձեռք բերում համաձայն կնքված պայմանագրի թիվ 1 հավելվածի: Արժեքը կազմում է 199. 001. 000 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Համագործակցություն չի նախատեսվում
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Տ. ԱՎԻՆՅԱՆ

17.06.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ